11.06.2014թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի Նիստի

Մասնակցում էին նիստի անդամները, շահառու հաշմանդամներ ունեցող հասարակական կազմակերպությունները.

Օրակարգում՝

Մարզում ներառական կրթության ուղղությամբ իրականացված աշխատանքների ընթացքը

/Զեկ՝. Գ.Սայադյան/

Ողջունելով ներկաներին տիկին Մուրադյանը շնորհակալություն հայտնեց հասարակական կազմակերպություններին ''Երեխաների պաշտպանության օրվա'' կապակցությամբ հաշմանդամ երեխաների համար կազմակերպված ակտիվ միջոցառումների կապակցությամբ::

Անցնելով օրակարգի հարցին տիկին Մուրադյանն առաջարկեց լսել տիկին Սայադյանին՝ մարզում ներառական կրթության ուղղությամբ շարունակվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Տիկին Սայադյանն ասաց, որ ուսումնական տարվա ավարտին պլանավորված չորս դպրոցներում՝ Արմավիրի թիվ 5-6, Վաղարշապատի թիվ 7-9 իրականացվել է ներառական կրթություն / ընդամենը 124 երեխա, մասնագետների պակաս չի եղել, դիտակտիկ նյութերով ապահովվել են դասասենյակները/:

2014-15թթ. ուսումնական տարում նախատեսվում է Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոցում բացել ներառական դասարաններ՝ 1-4րդ դասարաններում 37, իսկ 5-9րդ դասարաններում՝ 10 աշակերտներ: Այդ նպատակով աշխատանքներ են տարվում դասասենյակների և գույքի ձևավորման ուղղությամբ:

Ավարտելով նիստը տիկին Մուրադյանը հանձնարարեց ֆինանսական վարչության հետ համատեղ հսկողության տակ պահել խնդիրը՝ նոր ուսումնական տարին հաջող սկսելու համար;

Մարզպետի տեղակալ՝ ***Լ.Մուրադյան***

Արձանագրող՝ Ծ.Գրիգորյան